

ՀԱՅԱԿԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՄԻԱԿ ՄԻԶՈՑ

Պատրիարքական վերջին տագնապը աւարտ պրտառ Օրմանեանի առերկոյթ յաղթանակով, որը տարաւ նա իւր վեհապետի վերայ, ստանալով այս վերջինից գոհացում իւր հինգ առաջարկների կամ, ինչպէս ծանուցին եւրոպական թերթերը, «Հայկական ռէֆօրմների», որոնց մերժուիլը Առաջանի կողմից հաւասար պէտք է նկատուէր Օրմանեանի իսպառ հեռացման պատրիարքական աթոռից: Առաջանը չուզենալով զբկուիլ իւր հայ ապատամբ հպատակները ներկայացնող այնպիսի հլու և հաւատարիմ գործիքից, որպիսին յայտնուեցաւ Օրմանեան պատրիարքը, բարեհածեցաւ կատարել նրա ինդիքտները և հրաւիրեց նրան կրկին անշունել իւր պաշտօնի գլուխը:

Եկներեւաբար, հայկական «ռէֆօրմներ» ասելով չպէտք է այս գէպըում աչքի առաջ ունենալ, հակառակը անմտութիւն լինելով, այն ռէֆօրմները, որոնք առանձին յօդուածով մաս կազմեցին Ռէզլինի կօնդրէսում վեց մեծ պետառութիւնների ներկայացուցիչների կողմից մշակուած գաշնագրին և որոնց հիման վերայ Ռ. գուռը պարտաւորուեցաւ անյապաղ ձեռք առնել այն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ էին ապահովելու համար հայերի կեանքն ու ինչըերը քրդերի ու չէրքէզների պարբերական հարստահարութիւնների և աւարառութիւնների գէմ: այն ռէֆօրմները, որոնց իրագործման հասնելու համար հայ ժողովուրդը սպառելով ամեն օրինական, ամեն խաղաղ և քաղաքակիրթ ազգերին պատշաճ միջոցները, վերջեվերջոյ դիմեց յեղափոխութեան, միակ բնական և զիտական միջոցին՝ որին դիմում են և կդիմեն միշտ ձնշուած և լուծի տակ հեծող ժողովուրդները իրենց ազատութեան համար—գոհաբերելով զրա համար և բիւրաւոր կեանք և նիւթական անբաւ կարողութիւն և ամեն բան:

Արդարեւ, ի՞նչ են ներկայացնում իրանցից այդ «կարծեցեալ բարենորոգումները», որի վերայ ուզումէ Օրմանեան հաստատել իւր ընկած, հողի հաւասար գարձած ժողովրդականութիւնը և բարձրացնել պատրիարքական պրեստիժը: Շե-

րում են նրանք արդեօք մի որ և է նորութիւն, կամ նոյն իսկ նորութեան մի նշոյլ, հայկական քայլայուած կեանքում, որի վերայ յենու ելով կարելի լինէր յուսալ այդ կեանքի վերացնութիւնը: Մի խօսքով, խախտո՞մ են արդեօք նրանք որևէ է կերպով այն հնացած, փառած և այլ ևս անտանելի գարձած տախ զո՞ն, որի պահպան գործակցում է զիտակցօրէն մօնգոլական բոնապետական ռէժիմին հետ ձեռք ձեռքի տուած շահախնդիր երոպական դիպլոմատիան. — և ոչ մի կերպով: Վրութիւնը հասարակական կազմի տեսակէտից մնամ է մի և նոյնը, ձիշտ և ձիշտ այնպէս՝ ինչպէս էր սրանից քաան տարի առաջ, երբ նոյն այդ երոպական դիպլոմատիան գտաւ որ իրերի զրութիւնը հայկական վեց նահանգներում չէր կարող յարատեել, առանց ծանրապէս վըտանգելու քաղաքակրթութեան այնքան ընտանի ամբողջ մի ժողովուրդի, որպիսին է հայ ապարք, կեանքն ու գոյութիւնը:

Շանապարհուցների երթևեկութիւնը առեւտրական յարաբերութիւնների համար, վերջին մօնգոլական վանդալիզմի երեսից քանդուած, կեսաւել կամ հիմնայատակ կործանուած դպրոցների, վանդերի ու եկեղեցների վերաշնութիւնը, որքանոցների հաստատութեան թոյլտուութիւնը, կառավարական պաշտօնատուններում ծառայող հայ պաշտօնեաների, բանուորների ոռձիկների մնացորդի վճարման արտօնութիւնը և բանտերի տանձանքներին մատնուած մի քանի տասնեակ թշւառների արձակումը որքան էլ ուրախացուցիչ հանգաւանք ունենան, եթէ միայն գործակրուին նրանք, թշուառութեան բաժակը մինչև յատակը իմած և յուսահատութեան դուռը հասած հայ ժողովրդի համար, այսու ամենայնիւ դրանք չեն որ կազմում էին և գեռ կազմում են նրա իղձերը, նրա պահանջները, զրանք չեն որ ներփակում են այն անորոշ և առածգական բառի մէջ, որ «բարենորոգումներ», է անուանուում: Վրանք մի քանի կարկտաներ են միայն, որոնք առաջարկում է Առաջանը Օրմանեանին ծածկելու համար այն նոր պատառուածքները, որոնք ինքը բացաւ ազգի մարմինի վերայ, թոյլ տալով իւր խուժանին վատաքար կոտորել բիւրաւոր անպաշտապան էակներ, թալանել տամնիլ ամեն ինչ որ ձեռքի տակ էր

գալիս և ուրիշ բան չթողնել ետեկց բայց եթէ կեանքի և շնչքերի տխուր առերակ։ Այս կեղաերն են որ գալիս է մեր արիւնոտ թշնամին մաքրելու և կարծել տալու վերջին ամենածանր հարուածներից գեռես չմթափած հայ ժողովուրդին թէ իւր իրադէով վերջապէս կատարում է նրա իղձերը.

Վնիմող, անձարացած յեղափոխականների—իւր հանգիստը խոռվողների հետքը բնաջնջ առնելու ջանքերից, բայց կատաղութեամբ կուրացած նրանց դէմ, ուրիշ միջոց չգտաւ համենելու իւր նպատակին, բայց եթէ փակել ամրապինդ երկրի գաները հայ ճամբորդների առաջ, չթոյլ տալ ուեէ անցը ոչ դէպի ներս և ոչ դէպի դուրս հանձարեղ միջոց կիսավայրենի ժողովուրդներին—կարծելով առաջն առած լինել յեղափոխական ագէնտների ել ու մուտքին, թէև զրանով կամոց առներ երկրի առևտուրը, թէև այդ պատճառով էլ ինքը տէրութիւնը ենթարկուէր ինքնասպանութեան փանագին։ Այդպէս անմիտ բժիշկը՝ որ իւր հիւտնդը միկրոբների ելումուտքից ազատելու համար փակեր շնչառութեան խողովակները և ասֆիբիի ենթարկեր նրան։

Կհարկէ, որքան էլ հանձարեղ լինէր միջոցը, որով թշնամին ուզում էր ազատուած լինել իրահիւանդ մարմինի վերայ զիւրութեամբ անձող միկրոբներից, այդ վիճուկը սակայն չէր կարող երկար տեել. պէտք էր որ առեւտրականները շարժէին, պէտք էր որ հայ պանդուխար զիմէր դէպ օտարութիւն աշխատանք փնտուելու, որպէսզի ընտանիքն ու զաւակները պահպանէր, որպէսզի նոյն իրա, տէրութեան հարկերը վճարէր, առանց որի սա մի բոսէ չէ կարող շարունակել իւր պարագիտային գոյութիւնը։ Այս բոլորը անհրաժեշտ պէտք էն՝ թէլադրուած նոյն ինքն իրականութիւնից, ուրեմն և ճանապարհների բացումը անյետածելի պահանջնէն և չէր կարող այլ ևս ուշանալ և ահա սոյն այս անհրաժեշտութիւնը ներկայացնում է խորամանկ թշնամին հայ ժողովուրդին որպէս շնորհ իւր դորդառաս գթութեան, որը ունի իրը բարեկարգութիւնը գանգութիւնը և անպայման կապել ազգի ճակատագիրը, ազգի նոյն յոյսերի և իղձերի իրագործումը այն գահի հետ, որից որքան կարելի է շուտ պրօնիլը առաջն անհրաժեշտութիւնն է հայկական ներկայ կեանքի։ Այդպիսի քաղաքականութիւն հակառակ է ամեն կերպով և ամեն տեսակէտից թէ երկրի զրութեան, թէ աղքային բաղձանքներին և թէ ընդհանուր ազգի մօտիկ անցեալի և ներկայի յեղափոխական ողուն ու տրամադրութեան։

Բռնուած մի սոսկալի և անողոք զիմէմմայի մէջ՝ մեր թշնամին ինելքը կորցրել էր։ Կամ այն է որ անցքերը փակելով հայ ճամբորդների առաջ՝ երկիրը պէտք է մատնէր տնտեսական մահուան և կամ այն որ բանալով նրանց՝ իւր մօտ պէտք է հիւրընկալէր ճանձրացնող յեղափոխականները։ Առաջին փորձից յետոյ՝ նա ակամայ ընկաւ երկրորդի մէջ։ Ասսկալին այն է որ ճամբորդների ելումուտքը և յեղափոխականների զու-

յութիւնը լինելով երկու անհրաժեշտութիւններ ներկայ անտեսական և հասարակական այն կարգերի՝ որոնք տերում են ընդհանուրապէս թիւրքիայում և մասնաւորապէս Հայաստանի վեց նահանգներում, տաճկական կառավարութիւնը անպայման հարկադրուած է յոնգիլ այն զրութեան, որին յանգեցաւ նա Պուլթանի վերջին իրադէով որպէս փոքրագոյն շարիքը իրեն համար։ Հայ յեղափոխական միկուրը, ուրեմն, հակառակ կառավարական ամեն ջանքերի, մուտք կը գանէ դէպի երկիրը, կամի այնաեղ, զանելով իրա համար յարմար միջավայր և խսպառ կը քայբայէ այն խարիսուլ և հիւանդ հասարակական օրգանիզմը, որ առում է թրբական պետութիւն։

Եհա՛ թէ ինչ են և արուած որպիսի պայմանների տակ այն շնորհները, որոնք Օրմանեանը յաջողեցաւ իրեն կորզել իւր վեհապետից։ գրանք վերադարձ են, ոչ առելի ոչ նուազ, իրերի այն գրութեան, որ մեկնան կէտ եղաւ հայկական յեղափոխութեան ծագման և մի անգամ արդպէս վերջինս պահում է միշտ իւր գոյութեան իրաւունքը, քանի հիմնապէս, արմատապէս չեն փոփոխուած ներկայ կարգերը Տաճկա-Հայաստանում։ Այս մասին ոչ մէկը մեզանից, ոչ նոյն ինքն Օրմանեանը կարող է պատրանք ունենալ և կամ զոհ գնալ Պուլթանի չափազանց խոշոր խարէութեան որպէսզի ուշագրութիւնից վրիպէր։

Պական առելի կարեւոր և ազգային յեղափոխութեան տեսակէտից առելի ծանրակշիռ կէտը Օրմանեանի ձեռք բերած շնորհները չեն, որոնք խոստավանում ենք, որքան էլ չշօշափեն հայ ժողովդեան բուն, հսկական պահանջները, որոնք մնում են միշտ ձէս րատա, ուրախալի են սակայն այն տեսակէտից որ նրանք յայտնի շափով կարող են օգնել, եթէ միայն իրագործուին, դարմանելու վերջին աղէտներու անմիջական հետեւանք եղող իրերի վաթարացած զրութիւնը, այլ նոյն այդ Օրմանեանի ձեռք առած և հետեւած քաղաքականութիւնն է, գա այն ձգունն է, որով նա ձգնում է անպայման կապել ազգի ճակատագիրը, ազգի նոյն յոյսերի և իղձերի իրագործումը այն գահի հետ, որից որքան կարելի է շուտ պրօնիլը առաջն անհրաժեշտութիւնն է հայկական ներկայ կեանքի։ Այդպիսի քաղաքականութիւն հակառակ է ամեն կերպով և ամեն տեսակէտից թէ երկրի զրութեան, թէ աղքային բաղձանքներին և թէ ընդհանուր ազգի մօտիկ անցեալի և ներկայի յեղափոխական ողուն ու տրամադրութեան։

Յայտնի է որ հայ ժողովրդի քաղաքական յարագերութիւնը տաճկական բանապետութեան հետ ծառայի և տիրոջ, ծորափ և ազնուական աւատա-

պետի յարաբերութիւնն է։ Այսպիսի յարաբերութիւնն, որքան էլ զժուար, անախորժ և անհանդութելի լինէր, հայ ժողովուրդը սովորուած էր կրել նրան դարերից հետէ՝ քանի այն վերջի վերջոյ կարելի էր և այլ կերպ էլ լինել չը կարող։ Աակայն այն ժամանակից երբ տաճկական պետութիւնը սկսաւ քայլբարուիլ իւր անտեսական հիմքերից, շնորհեւ իւր արդիւնագործական նահապետական միջաների, որով միայն նակարող էր տկար և անյաջող կերպով կռուել երանից կուլտուրապէս աւելի բարձր հասարակութիւնների հետ, զբան միացած հետղիւտէ միմեանց յաջորդող ծանր պարտութիւններ, անկարելի գարձրին հայ ժողովրդեան իւր սեպհական աշխատանքով ու քրտինքով պահպանել մի պետական օրգանիզմ, որ իւր ամբողջ ծանրութեամբ ընկած էր իւր վերայ։ Պարզ է ուրեմն որ իրերի այսպիսի գրութեան մէջ առաջն անհրաժեշտութիւնը, որ դրուել հայ ժողովրդեան առաջ իւր հասարական գոյութիւնը պահպանելու համար կեանքի կռուի մէջ՝ ուրիշ բան ընկեր բայց եթէ իսկել իւր կապերը իւր պարագիտ-տիրոջից, որից ոչ մի փոխադարձ օգուտ չկար այլ ևս սպասելու, բացի վնասից, և մանէր ազատորէն կեանքի այն նոր պայմանների մէջ, որոնք կազմում են քաղաքակրթութեամբ բարձր կանգնած երազական ազգերի հասարական հիմքերը։

Հայկական յեղափոխութիւնը ուղղակի ծնունդ է հին յարաբերութիւնների խալառ խախտաման, խողման։ Չահերի մի խորին հակասութիւն, կուլտուրական ճգուռների մի արմատական անտագոնիզմ երեւան եկաւ երկու, ըստ երեսյթին, մի տէրութիւն կազմող հասարակութեանց մէջ—տաճիկներ և հայեր—որ բացուրձակապէս անկարելի է կացնում այլ ևս այդ երկու հասարակութիւնների միմեանց հետ կապուած դնալը։

Վմեն ուեէ քաղաքականական գիծ, ձգտում, կնկրախ հաշտեցնել այդ երկու անհաշտ եղբերը, գատապարտուած է ակնյայտնի ֆալլիտո-ի։ Միակ քաղաքականութիւնը որ համապատասխան է յայտնուում երկրի այդ ծուռ զրութեան դարման բերելու, այդ հայ ազգի յեղափոխական քաղաքականութիւնն է, որ ձգտում է զատել հայ հասարակութիւնը այն մորմնից, որի հետ կապուած նա ուզիղ դէպի ոչնչացումն է ընթանալու։

Մենք զիտենք որ Օրմանեան, նախ և առաջ որպէս պատրիարք, եթէ իսկ հետեւէր ամենից աւելի ժողովրդական պատրիարքների շարքին—Խրիմեան, Վարժապետեան, Խզմիրլեան—այնու ամենայնիւ, կրկին ոչնիչ չահելու իւր տիրոջից, որ անպայման հաւատարմութիւն է պահանջում, բայց դոնէ այս վերջնները իրենց բնած

բողոքական, եթէ ոչ յեղափոխական-մի բան որ անկարելի է իրենց որպէս պատրիարք քաղաքականութեամբ ներշնչում էին հայ ժողովրդեան ոչ սէր, ոչ հաւատք դէպի բռնսպետական ու էժիմը, այլ կրտսելու և ատելութիւն այդ ու էժիմի մասին և մի կերպ պատրաստում ապստամբական անգիտական պետութիւնը տիրող կարգերի դէմ։

Որ ներկայ ու էտիցիայի շրջանում, ուր ժողովրդեան ընդհանուր անկման հետ, ցաւալի է ասել, ակարացած է նաև ազգային փրկութեան միակ յոյս եղող յեղափոխական գործունէութիւնը, բընականարար առաջ գար կրկին քաղաքականական այն ընթացքը, որ կայանում է ամեն լաւութիւն, ամեն բարութիւն միայն և մի միայն մեր դահճապետից սպասել, որ Օրմանեանը, շարունակելով հնուելի Յարութիւն և Եշրքեան պատրիարքներին գուցէ չտարբերի սրանցից ուրիշ բանով բայց եթէ իւր աւելի կամ նուազ ծարպիկութեամբ, որ նա ի գործ դնելով հանդերձ իւր բոլոր ճարպիկութիւնը՝ անկարող լինի, քանի որ պատրիարք է, մազով չափ փոխելու Հայաստանում իրերի այն զրութիւնը, որի պահպանման նոյն իսկ ծառայելու նա հարկադրուած է, այդ աւելի քան պարզ է։ Մօտիկ անցեալի փաստերը առատօքն ապացուցին թէ այդ քաղաքականութիւնն և թէ պատրիարքական ոչնչութիւնը, անզօրութիւնը արմատականապէս յեղափոխելու հայկական կեանքը։ Եւ մենք չենք որ կարծենք թէ պատրիարքական անունը եկեղեցիների մէջ յիշել կամ չմիշել տալով կարող կիմնինը գնել նրան յեղափոխական շաւզի մէջ, որ տրամագծապէս հակառակ է իրերի զրութեան, և կարծել տալ ժողովուրդին թէ կարելի է պատրիարքից սպասել ցաւերի գարման, իգեալների իրագործում։

Ինչ մենք պարտաւոր ենք զգում անել՝ այդ բոլորովին ներհանին է, այդ՝ որքան կարելի է, ասսացինք, հեռացնել, անջատել ժողովրդեան հահաւատքը այդ փոտած հասարակութիւնից, որի շարժումները անդամալուծուած են ժառանգականօրէն և գատապարտուած այդպէս էլ մնալու։ Պատրիարքական քաղաքականութիւնը, ուրեմն, ամուլ է։ նա ոչնիչ չէ խոստանում մեզ բայց եթէ պատրանք և յուսախարութիւն։ Այն ժամանակից երբ ժողովուրդը ոտք կոխեց յեղափոխական սպարեզի վերայ, վարդից շնել ուզելով այն ինչ չէր կարող շնուել վերեկց, հարուածը տուաւ այդ պատրիարքական հասարակութեան, որ կդնայ այսուհետեւ օրօրուելով և տատանուելով երկու զրութեանց միջեւ, որոնք կռուի են բռնուած, և անողոք, երկարատեւ կռուի, սոյն այս կռուի մէջ եղող ուժերից կախուած լինելով նրա հաւատարակութիւնը, նրա այս կամ այն կողմը

թեքուիլը, մինչև յաղթական կը կանգնէ ժողովրդական տէնդէնցիան, և այն ժամանակ այդ հաստատութիւնը կդադարի այլ ևս լինելուց արտայայտիչ և ներկայացուցիչ ազգային կամքի. նա կմեռնի քաղաքականապէս:

Միակ յոյը, որ ունինք ազգային վերածնութեան գործին համար, այդ էլի և էլի, միշտ և միշտ Յեղափոխութիւնն է, որովհետեւ նա միակ զիտականն է, նա միակ ժամանակի պահանջն է: Շշմարիտ է որ անհատասար կոռու մէջ թշնամին շատ զոհեր տարաւ մեզանից, ձշմարիտ է որ տասնամետ յեղափոխական կոռու շրջանում սպառեցաւ ազգային ահազդին էնէրգիա, ազգային կորով և մենք այսօր կանգնած ենք ասպարէզի վերայ ոչ անպէս՝ իշպէս կյանկանայինք, այնու ամենային, ամեն բան չէ կորտուած և ամենը, որ եղած է, չէ եղած սոսկ վիաս: Շշմարիտ է որ թշնամու սուրբ հնձեց տարաւ թանկազին կեանքեր, մի սերունդ տակայն և այնպէս նա չյաջողեցաւ ոչնչացնել արմատը: Հայ կազնին կանգնած է դեռ, և կանցնին տարիներ, նա կրկին կուռծանայ, կամրանայ ուելի ուժեղ քան առաջինը և կշարունակէ կոռուիլ անգուլ, անդադար: Խթէ ընկնի նաև նոր սերունդը, յաջորդը կշարունակէ միենոյն կուրը, մինչև ձեռք բերուի այն՝ ինչ ազգային բաղձանքն է — Հայ ժողովրդեան կատարեալ և ամրողական ազատութիւնը:

ԱՅՐՄԻՔ ՍՈՒԼԹԻՆԻ ՔԲՔԻՑՔ

Հմաւում է լիոսիրտ թիւրքիայի արիւնախանձ վեհապետը և նրա ինքնագոհ այդ բերքանաց իրաւամբ մասնակցում են իւր համուկատար խորհրդականները, պալատական յարալէզները՝ հտպիտ, ճիւալային կերպարանը կոող բոլոր բարձրատափական գիշակերները: Ցընծութիւնը կատարեալ է, զի մի անգամ էլ թրբական նենգ դիւնագիտութիւնը յաղթող դուրս եկաւ, մի անգամ էլ նրանք կարող եղան իրենց տւանդական յապաղեցուցիչ, մանուածապատ քաղաքականութեամբ ցրուիլ իրենց գիշի վերայ կախուած մահաբեր ամպրոպը: Այս անգամ էլ ամէն ինչ յետածգելու, ժամանակ վաստկելու ուղեգիծը, կրթնած հակոշահ պետութեանց հակամարտ ձգումների վերայ, նրանց հնարաւորութիւնը ընծեսնեց, առանց մազաչափ անգամ տեղիք տալու ներքին և արտաքին բազոքող ձայների պահանջն, օսմանեան երերուն կայսրութիւնը իւր պատմական բւնաւոր բական կոռու վերայ պահելու: Եւ այսպէս, ահեղ փոթորիկ երի միջից անցնելով՝ թիւրքիայի գահակար այժմ անբոյթ, խաղաղ նաւահանգիստը հասած, իւր փափուկ բարձերի վերայ ընկողմանած, որտի ներքին գոհունակութեամբ հանդիսատեսն է այն բոլոր զժուարութիւններին, որոնց գէմ ներկայումն բաղխում են մի փոքր առաջ իրեն սպառնալից հրամաններ արձակող և միջամտելու կամեութիւն ցոյց տուող պետութիւնները: Եւ միթէ նա, մթրական կայսրութեան բացարձակ տէրը, առանձին պատճառ և նոյն իսկ իրաւունք չունի սրտավել

ուրախանալու, չէ որ զեռ նորերս էր, երբ եւր Մեծ Եպարքոսը, „օտարացած” քեամիլը, յանդգնութիւն էր ունիցած իրեն պարզելու թղթի մի կտոր, որի մէջ նա ուպիրշ կերպով յայտարած էր... ոկամ բարենորդում, չետեւաբար և պետութեանց պահանջն անյապալ լրացաւմն, կամ միակ պատասխանատուն՝ գալիք չուրիշներին: Այն ժամանակ ինքը նրա այդ քայլը ոոչ հայրենաւ, անասիրական էր անուանած և երեսն ի վեր ոդաւածն, ու միշտ միշտ անասիրական էր անուանած և երեսն ի վեր ոդաւածն, մինչդեռ առանց անսալու բարենորդութական խորհրդիներին, յաջողեցաւ, թէկ բիլաւորներիարեան գնով, անսաման պահելու իւր հայրենական ժառանգութիւնը, և որդ, իրրե վերջնական յաղթանակը տարող, ինչու չհրճուի, ինչու չըրբջայ լիաթոր:

Դիս շատ հեռու չէ այն ձախող ժամանակը, երբ անացեալ, անպագայ ուայեայ, ազգի մի ներկայացուցիչ համարձակութիւն էր անուամբ իւր ներկայութեան ներսուաբար նիրա անք, արդարութիւնն բառերը արտասանելու: Ովկ հրճուանքը: Այժմ նա Պաղեստինի մահափթ կիմայի առկե է տառապում: Իսկ ինքը, որ մինչև վերջ հեգնած էր պահանջ, արդարութիւնն, երաւունքը անհմատաց բառերը, ինքը հիմա ապահովաբար վայելում է իւր իմաստուն, բացարձակ ոոչ կարեմք ի պառուղը: Հետևաները: Այն, որ ներկաթ ասուած անձի փոխարէն ինքը ներկայում իւր ձեռքի տակ ունի այնպիսի մի հըռու: Հնուղանդ գործիք, որ իրեն ոկայսերական չնորհներ, անարգ փշունքներն իսկ թմբուկներով է փառաբանում: Եւ ովկ փոփոխութիւն: Այժմ հայ եկեղեցու մէջ բողոքող, անիծող ձայնը չէ որ երկինքն է բարձրանում, այլ մղթանք, արևշատութիւն իւր ներանկաբեր կեանքի համար: Իւր նախահայրերը խելօք միտք էին յղացած, անհաւատաց հային էլ կրօնական մի ներկայացուցիչ կարգելու, որպէս իսկ ներկայական կամական պատմական այդ ցանկութիւնը լիուլի կերպով չէ կատարուած: Չէ որ հիմա հայ եկեղեցին գործել է մի գրասենեակ, մի շուկայ, որի մէջ սիւր պատրիարքը մունետիկը մէկիկ բացատրում, պատճառութանում է իւր արհամարհօրէն նետած բարձր չնորհները: Ել սրանից աւելի պատճառ, անխտան ուրախութեան:

Ովկ է այն մրրկալից ժամանակը, երբ իւր առաջ արձանացած էր պատմական մի խորիս, ապստամբ միժուղվուրգ: որի տոխւծասիրտ զաւակները, ազատութեան կոչը բերան առած, հրապարակապէս արհամարհում էին իւր միահեծան իշխանութիւնը և իւր մայրաբալարի մէջ իսկ բացարձակ հրամաններ արձակութան: Այդ դրութիւնը լուրջ վտանգի մի դուռ էր, զի հայ պատմական արծիւը իւր հատու մագիլներն էր լայն բաց արած, իսկ յեղափոխական խանդը, ոգեւորութիւնը ալիքներ կազմելով: օղակ օղակ տարածուում էին իւր կայսրութեան բոլոր կողմերը, մինչ այն սատիհան, որ նոյն իսկ ողարունիք փափկառաւնք Պոլսոյ քաղաքիները: Իսկ այժմ: Այժմ իւր առանձին տնօրէնութիւնների չնորհիւ Հայ ազգը ժառանգորդ է եղած երեք հարիւր հաղար գամբարանների:

նրա մեծ զանգուածը, իրական լծակը երկրի մէջ կողոպտուած, հարստահարուած, օթեկ հացի խակ կարօտ, թէև վրիժառութեան կոյժը, յեղափոխ հան կրակը սրբատին մէջ բնաւ չմարած: Խակ մի քիչ առաջ կարմիր յեղափոխական կարծուածներից շատերը խոպան դաստիքը եղած ողարձի եկան, շատերն սկսեցին խոյնեմաւ. թիւն համարիլ այլ ևս ձայն ծառուն չհանելը, շատերն էլ իրենց բարեացակամութիւնը այն աստիճան առաջ տուրան որ իւր ձեռքով ծրագրած ընդհանուր կոտորածների պատճառը, պատասխանատուն հայ յեղափոխականը համարեցին: Եւ այս բոլորից յետոյ էլ ինչո՞ւ չքրբջալ

— Ոխալում ես և չարաչար սխալում, Մեծ Մարգասպան: Քո հրճուանքը երկար չի տերիլ: Ժաւանդորդդ լինել ցանկացող պետութիւնների ժամանակուոր անհամությունների գէմ բաղիսելուն վերայ շատ էլ յոյշ մի գնիր. Նրանք քեզ այժմ աւելի մօտից են օղակում: Այսուհետեւ բաղաբական ոչ մի բաղկացութիւն կարսղ է քեզ վերջնական անկումից ազատել և դրա համար էլ, ապօնչ ծերունի, պատրաստուիր չոփի տալու գերեզմանափորին:

Խակ չարատանջ հայի փրկութեան Ա. Գործ ծըլիրեն գոռութեան միակ նպատակակէտն արող հայ Յեղափոխականը, առանկանկերի իւր ուղեգծի մէջ, շուտով իւր միացած, համազգային ոյժերով քո գարշելի գլխիդ նորից կամ կանի զամոկլեան սուրբ: Եւ այս անգամ, կամ քեզ վերջնական մահ—Յեղափոխական հայի ձեռքով, կամ վերաբնութիւն—Բնիքնավար, ազատ հայատանով:

Այն ազգը, որ հին ք. դաբակը թութեան առաջնորդ պետութիւնների գէմ գարեւոր պատերազմներ մղելուց յետոյ, կարող եղաւ իւր ազգային ինքնուրոյնութիւնը և կենսունակութիւնը հաստատ պահպանել իւր Մայր Հայրենիքի մէջ, նա ապահովաբար ոյժ և կարողութիւն կունենայ իւր մի անգամ սկսած պայքարը յարատելորէն շարունակելու, առաջ վարելու, մինչև ցանկալի վերջին յաղթանակ: Գոյցի որդիքը քաջեր են:

Մի փոքր էլ սպասիր և քրիջդ վերջ կստանայ, կարմիր Սուլթան:

Ս Ա — Դ.

ԶԼՅԹՈՒՆԸ

XV, XVI եւ XVII ԴԱՐԵՐՈՒՄ

II

XV. Իդ գորի մէջ հայոց բաղաբական և զնւորական ոյժը, Ալլիկիայում, ընկել էր վերջին սնդամ. գաշտային գաւանսերը քանգուած էին, բաղայները հրդեհւած և երկիրը ներկայանամ մի աւերակ: Միւնյոյն ժամանակ, սակայն, հեռաւոր մի անկիւնում Զէյթունը շենանում էր, բազմանում և որպէս պաշտամունք մի ոյժ, կազմակերպում նորանոր փախատականները լինելով լինեային, անմատչելի թշնամու յարձակումներ մնում էին ի գերեւ: Զէյթունցին կորել էր օհիանի, Արեգնու և Գուռնովի զորս գլխաւոր կամուրջները և առանձին խմբե. րով պահպանում հիւսիսային Ղսուխը, Արեգնի բերդի—Ալա-Գայայի օձակտոյտ կիրճը և Թէքիրի անցքերը: Եւ այսպէս, կղզիացած լեռնավանդակի ծերպերի մէջ, մշտական սարտափի ու վտանդի տակ նա առաջ էր տանում կեանքը:

Միշե 1440-60 թականները օհիանի գետահովում, Զէյթունի շուրջ տեսնում են մի քանի

անկախ ամրոցներ, օրոնք պաշտպանում էին հայ բերդատէրերի կամ իշխանների կողմից: Մեղ հասնում է 1473 թւոկնից մի յիշատակարան, գրւած Հեթումի ազգական Ալլիկոս վարդապետի կողմից որը բաւական լսու և սփոռում հիւսիսային գաւառների այս շրջանում ենթարկուած դրութեան վրայ: Այդ յիշատակարանը արձանագրում է, թէ վերջին Լեռներ գերութիւնից յետոյ սպարապետ Հեթում: Զարմանուշի կողմանը հետ միասին, մի քանի յաղթական կախներ ունեցաւ եղիպացիների գէմ և ամրացաւ Կանչի բերդը: Սի առաջ տեղի ունեցան երկու պատերազմներ ուր նա մեծ հարաց սիստեմ կամ եկամենը հայոց յաստութիւններին: Սակայն քիչ յետոյ Հեթում սպանւեց Գրիգոր անուն մի մասնչի կողմից, իսկ կինը՝ Զարմանուշին՝ Հեթումի մահից հինգ տարի յետոյ Գրիգոր որդու հետ երեք արիւր լեռնականներով յարձակեւեց սկզբանը ու կրաւեց Կոկիսնը, Ռւլնիսն, Կապանը և համանուն բերդը: Շուրջ 65 տարի Զարմանուշին կառավարեց այդ շրջականներն և պահպանեց աղդաբնակութիւնը նրանց յարձակումներից: Յիշատակարանում նաև յիշում է, թէ Զարմանուշու և Հեթումի գործերը արձանագրւած են քոնչի կանչի վանքերի մէջ: Դա գուցէ Ճիշդ եղած լիներ, բայց վերջին Ապստամբութեան միջոցում թիւրբերի կողմից այրւեցին այդ վանքերի բոլոր մագուղթեայ գրբեր և ձեռագրեր և այլեւայլ իրեղենները, որոնցից շատերը թողւած էին Ռուսիան իշխանութեան ժամանակներից: Ժողովրդեան աւ անդութիւնը, առանց յիշելու Զարմանուշու անուն, պատմում է մէկ ինչ որ կողմ մասին, որը իբր գրաւեց այդ վանքերը և բազմաթիւ կոփեր մղեց: Խրականութիւնն այն է որ 15-րդ դարի ընթացքում ոչ միայն կանչի և կապանի շուրջը, այլ նաև Գեավուր-Դաղի, Պարտասի և Հաճնի լեռներում տեղի են ունեցած այդպիսի բազմաթիւ գէպքեր, ուրնը սակայն իր ժամանակին չեն արձանագրւած պատմութեան մէջ և ընդմիշտ մոռացութեան մատնեած: Թագաւորութեան մնացորդ այլ և այլ զարմանուշիներ կամ հեթումներ ապատանեցին այդ ամուր վայրերը և պաշտպանեցին իւսանիքների հետ միաժամանակ ժամանակական լընտանիքների հետ միաժամանակ ժամանակական լընտանիքների հետ միաժամանակ անդիկայի հայոց հարստութիւններ և նրա վերջին շառաւելիզները բոլորովին դադարեցան իրանց գոյութիւնից օրհասական կոփեր մղելով:

1450 թականից յետոյ Զիւլգատիրները, Թիւրք-մէն մի ցեղ, հետզետէ զօրուցան և գարձան հայոց ամենավտանգաւոր թշնամին: Կրանք ընտրեցին Մարտչը իբրև իշխանանիստ քաղաքը և իրանց ոյժերը կեդրօնացրին այդ գաւառի մէջ: Հասան Բէկի և Շահ-Սուլարի ժամանակ, այդ ցեղը յաղթող հանդիսացաւ միւս բոլոր իւլամ ցեղերի մէջ, ամբողջ Ալլիկիային տիրեց և իշխանութիւնը ընդուրձակեց հետաւոր երկիրներ: 1465 թւին Հասան Բէկը արշաւեց մինչև Վրաստան և այդ ժամանակ յետոյ Զիւլգատիրների ցեղերի ցեղը յաղթող հանդիսացաւ միւս բոլոր իւլամ ցեղերի մէջ, ամբողջ Ալլիկիային տիրեց և իշխանութիւնը ընդուրձակեց հետաւոր երկիրներ: 1465 թւին Հասան Բէկը արշաւեց մինչև Վրաստան և այդ ժամանակ յետոյ Զիւլգատիրների ցեղը յաղթող հանդիսացաւ միւս բոլոր իւլամ ցեղերի մէջ, ամբողջ Ալլիկիային տիրեց և իշխանութիւնը ընդուրձակեց հետաւոր երկիրներ: 1465 թւին Սուլարի օրով գրեթէ ամբողջ սկսող շաբաթապէս նւաճեւցին առանձին առանձին ժամանակ յետոյ Զիւլգատիրների ցեղը յաղթող հանդիսացաւ միւս բոլոր իւլամ ցեղերի մէջ ապատանուած էին հայոց թագաւորական վերջին ցեղերն և զինւորական ոյժի մնացորդները: Շահ-Սուլարը եղաւ Ալլիկիայի գաւառանիստի արշաւանիքները սկսում են 1465 թւից: Արտ օրով գրեթէ ամբողջ սկսող շաբաթապէս նւաճեւցին առանձին առանձին առանձին ժամանակ յետոյ Զիւլգատիրների ցեղը յաղթող հանդիսացաւ միւս բոլոր իւլամ ցեղերի մէջ ապատանուած էին հայոց թագաւորական վերջին ցեղերն և զինւորական ոյժի մնացորդները: Շահ-Սուլարի բանակները քալեցին մինչև Վրաստան, Գամասակոս և Միւ-

շերկրականի ափերը. նա գրաւեց ամբողջ դաշտային Կիլիկիան, Ախուր, Վտանան, Տարսոնը և լեռնային գտաւոների բերդերը, ինչպէս Կապան, Կանչին ևն: Աւր նա կարողացաւ արշաւել, անխնայ կերպով կոտորեց հայ բնակիչներին, և զրանց տեղ հաղորդաւոր թեւրքմէն գաղթակաները, Գամասկոսից, բնակցրեց Մարտաշ, Ախուր, և մասնաւորապէս Զիհանի միջնահօվիտը, որտեղ և Հիմնեց մի գիւղաբաղար և գաւառն անւանեց իր ցեղի անունը, Գարս-Զիւլգատարիէ: Ընթակիլի է որ Զարմանուհին և սրա յաջորդները զարկւեցին այդ բլունաւորի հետ և անկարող դիմադրելու, Կապանի և Կոկիսոնի բնակիչների մի մասի հետ խոյս տվին և ապատանեցին Զէյթունցիների մօտ, որոնք զօրուոր դիրք էին ստեղծել իրանց լեռներում: Շահ-Սուլարի ժամանակ բոլորովին կերպարոնակուն եղաւ Կիլիկիան: Մինչեւ նրա արշաւանքների սկսելը հայերը, թէև կորցրած իրանց քաղաքական իշխանութիւնը, սակայն տընտեսապէս ունէին բարեկեցիկ մի վիճակ, մինչդեռ դրանից յետոյ թշւառութիւնը եղաւ ընդհանուր և բացւեց անհինանութեան և սարկութեան տխուր գարագրլուիլ:

Մինչև 16-րդ դարը, ինչ ժամանակ օսմանեան բանակները նորանոր արշաւանքներով առաջանում և հաստատում էին Կիլիկիա, Զէյթունցին անընդհատ կոփիներով էր զբաղւած Զիւլգատիր, Գարաման ցեղերի և եղիպտական բանակներկ հետ: Նրբեմն կեզրոնացած նա պաշտպանում էր իր լեռներում, իսկ երբեմն էլ նեղւած կեանքի անհրաժեշտ կարիքներից, գուրս էր պրծնում իր բոյնից և ասպատակում իսլամ գաւառները: Այս ժամանակամիջոցում Զէյթուն չունեցաւ հանդիսաւ և նվթարկւած լինելով մշտական ընդհատութեների:

XVI-րդ դարու ընթացքում օսմանցի բանակները թափւում էին մորեխի հեղեղի նման և ոչնչացնում Կիլիկիայում այն բոլորը, ինչ արգելք էր հանդիսանում նրանց հոսանքի առաջ: Երկիրն քամւած էր արգէն իր կենսական օյժերից, որի շնորհով նրանք ունեցան ամեն կողմէ յաղթանակներ և անսպասելի աջողութիւններ: Գարաման, Զիւլգատիր և Բամազան ցեղերը միաժամանակ անդադար զարկւելով հայերի, յետոյ միմեանց հետ, տկարացել էին: Արանք էին միակ խոչընդուռ օսմանցիների տիրապետութեան Կիլիկիայում, սակայն տեղի տւին հէնց առաջին բաղնումից: Նախ օսմանցիները արշաւեցին Գարամանների երկիրը որի իշխանութիւնը վերջացաւ 1486 թւին: 1515 թւիւնին Զիւլգատիրների զօրեղ իշխանութիւնը քանդեց եղիպտացիների կողմից, ըայց քիչ յետոյ վերջիններս էլ տեղի տայով, Մարտաշը անցաւ Օսման նիների ձեռքը: 1575-ին նոյնպէս օսմանցիները յաղթեցին վերջնահանապէս բամազան տոհմին և գրաւեցին նրանց երկիրը: XVI-րդ դարու սկիզբներում երկրի բացարձակ տէրն եղան Օսմանցիները: Սակայն նրանց աշխարհակալութեան ամբողջ ընթացքում, ամեն տեղ նոյնպէս և Կիլիկիայում նրանց բանակները չը հաստատեցին որոշ տեղեր, ընդհակառակը նրանք որպէս մի կործանիչ հօսանք բաւականացան աւերել ընդարձակ նահանգները և թալաննել ու կոտորել սրանց բնակիչներին: Նրանց արշաւանքները ունեցան վայրենի մի բնաւորութիւն. Արանք անընդունակ եղան հաստատել վարչական կազմակերպութիւն կամ կարգ. նրանց կեանքը չէր տալիս այդ:

Միլիօնաւոր կիսավարենի թշւառականներ, գուրս թափւած իրանց խրճիմներից սրակում էին հեռաւոր երկիրներ՝ տանելով իրանց գնացքի հետ արիւն ու հրգեհ: Մի քանի արշառանքներով Կիլիկիայում նրանք ունչացքին տեղական հաստատութիւնները, հաստրակական կարգերը և քարշ ձգեցին իրանց ետևից ամայութիւններ: Ասուաշում, Ասունայում և ուրիշ մի քանի կարգերով վենիկ ցեղերի գլխաւորներից ներկայացուցիչներ կարգելով, և այդպիսով օսմանցի կուսակալութիւններ հաստատելով, նրանք ուղղեցին գեպի Փոքր-Ասիայի հիւսիսը, գէպի պարսկական, ուսւսուկան և եւրոպական սահմանները: Արանք շարունակում էին ամբողջացնել իրանց պատմական գերը այդ հեռաւոր աշխարհներում:

Զէյթունը, իր աշխարհագրական լեռնային գրութեան շնորհով, ազատ մնաց օսմանցիների արշաւանքներից: Եւս առաւել նա ուժեղ զգաց ինքն իրան երբ շնորհով թիւրբական արշաւանքների, Ընկան իր շուրջը սունկի նման տձող և շարունակական կերպով իրան անհանգտացով թիւրբէն իշխանութիւնները: Կատաղի թշնամիներն այլ ևս ընկճւած, այդ ժամանակից Զէյթուն գարձաւ գերակռող ոյժը շրջապատի կիսանկախ տէրէբէկութիւնների մէջ: Պատմութեան այդ ժամանակամիջոցում Զէյթունի համար բացւեց մի նոր տարեգլուխու: — անտեսական և քաղաքական կացութիւնը նկատելի կերպով զարգացաւ և վեր հանեց համեմատարար փոյլուն և նշանակութեան արժանի մի շըջան, որի ընթացքում գիւղն ընդարձակւեց, գաւառի բնակչութիւնը բազմապատկւեց և յիշատակազրենի մէջ «ը ձանագրի եց գիւղաբաղութ կամ քաղաքը: Հաղորդակցութիւնը՝ Կեսարիայի և հիւսիսային հայ գաւառների հետ աւելի կանոնաւորւեց, բայց եցին հարաւային կամուրջները յարաբերութեան մտնելու Մարտաշի, Հաջնի և հեռաւոր նահանգների հետ: Տներ հետզհետէ շինւեցին Աստւածածնի վանիի շուրջը քաղաքի սահմանից դուրս և գաղթականութիւնը գիմեց գէպի բերդի հիւսիսային լեռնաձորերը կաղմելով 12-ի շափ օբաներ: Զէյթունցին կարողացաւ պաշտպանել Ֆոնուզի, Արեգնու, Մարտի, Նոյնպէս և Մարտաշի հայերին, որոնք գուցէ տեղի տային, այդ շփոթ կացութեան մէջ, գոյութեան կուռում, եթէ չունենային նրա զէնքի աջակցութիւնը:

Զէյթունի քաղաքական աղդեցութիւնը գնալով մեծացաւ և զգալի եղաւ թիւրբ ցեղերի վրայ. միաժամանակ զարգացաւ սեղական արհեստները, առետրական յարաբերութիւններն և իր ժամանակի գպարական կրթութիւնը: Այս բոլորի ապացոյց են բազմութիւններ, որոնք մնում են բնիկ Զէյթունցի Կարազիանի կաթողիկոս նշանակաւած 1724 թւին: Այդ ժամանակամիջոցում մշակւեցին շուրջը գտնւած հողերը և աւելացան այդիների թիւը: Խաղողագործութեան տեղի տային հայ գաւառների մէջ ասուածակագրերի հետ նաև այն վկայութիւնները, որոնք մնում են բնիկ Զէյթունցի Կարազիանի կաթողիկոս նշանակաւած 1724 թւին: Այդ ժամանակամիջոցում մշակւեցին շուրջը գտնւած հողերը և աւելացան այդիների թիւը: Խաղողագործութեան տեղի տային հայ գաւառների մէջ ասուածակագրերի հետ նաև ասուածակագրութեան մտնելու արդիւնքուն ասուածակագրերի կողմից, էջմիածնի կաթողիկոս նշանակաւած 1724 թւին: Այդ ժամանակամիջոցում մշակւեցին շուրջը գտնւած հողերը և աւելացան այդիների թիւը: Խաղողագործութեան տեղի տային հայ գաւառների մէջ ասուածակագրերի հետ նաև ասուածակագրութեան մտնելու արդիւնքուն ասուածակագրերի կողմից, էջմիածնի կաթողիկոս նշանակաւած 1724 թւին: Այդ ժամանակամիջոցում մշակւեցին շուրջը գտնւած հողերը և աւելացան այդիների թիւը: Խաղողագործութեան տեղի տային հայ գաւառների մէջ ասուածակագրերի կողմից, էջմիածնի կաթողիկոս նշանակաւած 1724 թւին: Այդ ժամանակամիջոցում մշակւեցին շուրջը գտնւած հողերը և աւելացան այդիների թիւը:

րիայի զծով մենչև երուսաղէմ։ Միաժամանակ մեծ զարկ ստացաւ երկաթագործութիւնը և կրկնապատկեց երկաթաշանքերի թիւը բներտի լեռներում։ Նրանք շահագործում էին, թէև նախնական պայմանների մէջ, մեծարանակ երկաթ և իրանց կարաւանների հետ տարածում երկրի զանազան կողմերը։

ՀԲԱ2ԵԱՅ—ՄԱՐԱ

ՆԱՄԱԿ ՄԱՍԱԶԿԵՐՏՔՆ

Վերջին Ռուս-թրբական պատերազմէն յետոյ քիթ լիսի վիլուեթի և Տէրսիմի քիւրդերը հետզէտէ կղզիացուծ էին իրենց լեռների մէջ անվտառհ վերաբերութեամբ դէպի սուլթանի կառավարութիւնը և կը տանէին կիանըը կիսավայրենի, թափառտկան և գրեթէ անկախ կերպով։ Մի ժամանակ նորա յայտարարած էին ապստամբ և իրենց զինւած խմբերը կը վրդովէին նոյն շրջանների քաղաքական և զինւորական վարչութիւնները։ Ուժունական թւականներին սուլթանի փաշանները մի քանի անդամ խիստ միջոցներով փորձ արին նւաճել այդ կիսանկախ քիւրդերին, բայց ջանքերը մնացին եղուր և խորտակւած։

Քաջալեցւած կառավարութեան կողմէ և զինւած կանոնաւոր հրացաններով, քիւրդ զանազան աշխրէժները, ազատ հրապարակ շինեցին իրենց վայրագութիւններին բուլուսուխուր ու Մանազկերութը, երկու հայրանակ և խոր ընկած գաւառները ուր տրտունջը կամ լացը կը մնան խեղդւած և առանց արձագանքի։ Երեք միմիանց հակառակորդ աշխրէժներ, Հայդարի, Սիրկըցի և Հասանցի, իրենց համիդիէ նշանակած խմբերով 96 թէւն իվեր հաստատեցան մեր գիւղերը, խլեցին մեր տաւարների և ոչխորների լնդարձակ հօտերը, վարելու եղները և ապրելու միջոցները։ Անցեալ տարի սորտ զբաղւած էին ցեղական կուիւներով միմիանց գէմ, որոնց ասպարէզը կը դառնային մեր գաշտերը։ Առաջարութիւնը ուղեց միջամանէլ, սակայն իզուր. արդէն երկու տարի է, ինչ թիւրբական ազգեցութիւնը գոյութիւն չունի և ոյժն ալ կը բացակայէ։ 98թ.-ի աշնան ցեղապետները կարգադրեցին իրենց մէջ ծագած հարցերը և հաշտեցան։ «Արքա բաժանեցին ամբողջ գաւառը քմածին սահմաններ գծելով և սպառնալով, որ միմիանց սահմաններէն անց չը կենան։ Այս բոլորը տեղի ունեցաւ կառավարութեան աշքերի առաջ հայերը բողոքներ յայտնեցին, խնդրեցին ապահովութիւն իրենց հողերի համար, բայց անօգուտ, զրովէնեաւ անկարող էր այդ անել։

Այս առուայ սկզբին, ցեղապետները ցած իջան իրենց լեռներէն և հաստատուեցան մեր գիւղերը լնտրելով ամենայարմար շէնքերը իրենց բնակութեան համար։ Խլած եղները, տաւարները են, վերագարձրին մէզ վար ու ցան անելու։ Այժմ նոցա սեփականութիւն են մեր հողերը, մեր եղները, մշակութեան գործիքները, իսկ մենք պէտք աշխատենք որպէս մարա պատճի նոցա։ Հողերի վրայ և յանձնենք աշնան մեր արդիւնքների մեծագոյն մասը։ Քիւրդերը այժմ լաւ են հասկացել թէ հողերն են նշանակելի, թէ հայերս միշտ կողոպատած, թալանւած, դարձեալ ունենք մի կտոր հաց, մինչպես ընդհակառակ իրենք լինելով կողոպողը, իրենց աների մէջ կը պակասեն ապրելու անհրաժեշտ միջոցները։ Թէև այդ ըմբանել են և այդ պատճառներով ցեղապետները և աղանդերը կը հաստատեն։ մեր գիւղերը,

սակայն իրենք կը մնան գարձեալ անգործ, օտարակեր և անընդունակ կուլտուրական և քաղաքակրթութեան պայմանների։ Հայերս ենք, որ պէտք է աշխատենք, վարենք ու ցանենք իրենց ապրութիւնը հայութիւնը կողմէ։

Ահա այսպէս սուլթանական թէֆիմը Մանազկերութիւն կուրսի ու շրջակայթի հայաբնակ գաւառները առաջնորդեց գէպի անարխիան ու յետագիմութիւնը, մահացնելով կեանքի և նոր աճող քաղաքակրթութեան ծիլերը։ Դուռի քաղաքականութիւնն էր այդ՝ զեկավարւած սուլթանի նախագաղաքարութիւններով հիւսուած խելքի կողմէ։ Անկայն թիւրբական հնացած միջոցները իզուր են. քիւրդը չի կարող ապրել, գոյութիւնը պահպանել առանց հայերի աշխատանքի ու նրա արիւնակի քրտինքի, մինչգեռ միւս կողմէ այդ արտերի, շէնքերի, դաշտերի և կառավարական տուրքերը անվճար և գանձարանը դատարկ կը մնան եթէ հայերի ձեռքերը չը շարժւեն, հայի գութանը չը ակսու հողի սիրու գուրս բերելով կենդանութիւն։ Դա հասկանալի է թէ քիւրդի համար և թէ իրեն թիւրբ կառավարութեան համար։ Երկրի տնտեսական զարգացումը բարձրացել է միշտ և կախւած է եղել հայերէն։ Մեր ազգաբնակութեան գոյութիւնը անհրաժեշտութիւնն է, մինչդեռ ներկայ թէֆիմը, քրդական կամ սուլթանական, վիճակւած չէ մշտական և մնայուն գոյութեան իրաւունք։

Ալառավարտկան պաշտօնեաները և նորա ազգեցութիւնը երկու տարի էր արդէն կը նւազէր, իսկ այս տարի գարնան ցեղապետները բոլորովին հեռացուցին իրենց իշխանութեան քաշաններէն (սահման) թէ Մանզկերութիւն և թէ կորի գայմագամները իրենց սատիկանների ու ստրագրեալների հուս։ Ապրիլ ամսէն իվեր հաստատեցաւ քրդական կառավարութիւն։ քիւրդ գիւրէրէկիները հրաշքով քաղաքակրթւեցան, և այնքան բարի են, որ կառավարութեան բալոր հոգսերը իրենց վրայ առին, իրենք կը դատեն ու կը դատապարտեն, իրենց սովորութիւնները յաջորդեցին օրէնքներին, իսկ օրէնքները իհարկէ ցեղապետների գլխի մէջն է։

Ալ մնայ հային տանել, տոկալ, ինչպէս որ այդպէս ալ արած է առանց ընկճւելու, առանց տեղի տալու ներկայ ձախող հանգամանեների առաջ։ Հայոց երկիրը, անցեալով մէջ, ունեցել է այսպիսի բազմաթիւ տիսուր, արիւնալի շրջաններ, և ամեն անգամ յոյսը հետեւլ է լուսաւար գծերով։

ՅՈՒՄԱԼԻՉՁՄՐ ՓՐԵՆՍԻՑՅԱԽՄ

Լուսաւորութեան գարը, հազիւ մայր մանելու վերայ, կշտապէ արձանագրել իւր փառաւոր գարագրութեան վերջին էջերում նաև մի հասարակական խոշոր փաստ, որ նուազ վճռական գեր չի խաղայ ապագայ մարդկարութեան կաղմի, նրա ճակատագրի նկատմամբ։ Այդ փրանսական սօսիալիստական ազգային առաջն կոնգրեսն է, որ կանչուած է համախմբելու, միութեան վերածելու հինգ մեծ և ինքնուրոյն կազմակերպութիւնները և սինդիկային բանուորական միմեանցից անջատ խմբերը, որոնք ներկայացնում են գրանցայում սօսիալիստական բանակը։

Սօսիալիստական գաղափարների կլասիկ երկիրը, Գրանսիան, շնորհիւ յատուկ և առանձին պատճառների, որոց մէջ մանելը ներկայ յօդուածի առաջն ներից գուրս է, մինչ օրս չկարողացաւ, հակառակ ամեն և ամեն խումբերի կողմից արտայայտուած ցան-

կութիւններին, իրագործել պրօլետարիայի եղեալը կազմող հասարակական կարգաւորման համելու համար կազմակերպական այն ձեւը, որին դիմում են վերջ ի վերջոյ բոյոր, թէ կենսաբանական և թէ ընկերաբանական աշխարհներում, ագրէգացիաները, որոնք կամենում են պահպանել իրենց գոյութիւնը կեանքի գուռար կոռուի մէջ: Այդ ձեւը որբան կարելի է խիստ կեղրնացած դրութիւնն է, որի մէջ կոռուելու հարկադրուած մարմինները տնտեսում են ամենից աւելի էներգիա: Ամեն պայման հաւասար լինելով՝ կուտղոյժերի մէջ նըսնք կտանին և իրենց գոյութիւնը կապահպին, որոնք ամենից աւելի լաւ կիրագործեն այդ կազմակերպութեան ձեւ:

Այս կողմից, եթէ չիշենք այլ երկիրներ, որոնց մէջ արդի սօսիալիզմը աւելի կամ նուազ մօտ է գտնւում կոռուի իդէալական այդ ձելն, գերմանիան է անշուշտ՝ որ առաջին տեղն է գրաւում: Ապաքէն այնտեղ է որ տեսնում ենք սօսիալիտական ոյժերի ներքին և խոր միութիւն, որ կեցած է տեսականապէս և գործնականապէս մշակուած ամենահաստատուն հիմքերի վերայ. այդ պատճառաւ էլ գերմանական սօսիալիզմը այս ըոպէիս զրեթէ մրակն է որ լուրջ երկիւղ և պատկառանք ազդէ ոչ միայն ժերմանական բուրժուատ միապետութեան, այլ նաև եւրոպա-

կան բուրժուատ առհպետութեան, այլ նաև եւրոպա-

կան բուրժուազային առհասարակ: Մինչդեռ, դրա գիմաց, ինչ է ներկայացնում ֆրանսական սօսիալիստական կուսակցութիւնը. եթէ ոչ քառոսին, բաբելոնական, գոնէ անիշնանական մի դրութիւն, ուր իւրաքանչիւր բաժանում, որ նոյն իսկ տակս է իրան կուսակցութիւն անունը, թէկ ինքն իր մէջ իսկոտ կազմակերպուած, աշխատում է սակայն նախանձախընդութեամբ պահպանել հակառակորդ բաժանման հանդէա իւր կատարեալ անկախութիւնը, չկամենալով մտնել նրա հետ որևէ է կօմպօմեսի, որևէ է պայմանաւորման: Անիշնանական այս վիճակը, որբան էլ հականալի իւր բացատրիչ պատճառներով, որոնք միենոյն ժամանակ ցոյց կտան զարգացման աւելի ստորին աստիճան սօսիալիտական էվոլիցիայի վերայ. ուրիշ արդիւնքի չէր կարող հասցել բայց եթէ թշրինամի բուրժուազական և առհասարակ ռէկացիօներական բանակի զօրութեան պահպանման, որի տկարացման ուղղացման, սակայն, հաւասարապէս շահակից են ներկայացնում սօսիալիստական բաժան-բաժան բոլոր խումբերը: Այդ վիճակը, սակայն, չէր կարող յարատենել. կեանըը իւր նոր պահանջներով հրամայող կերպով դրում էր նրանց առաջ և հրամայում վերջ գնել այդ անիշնանական անյարակից կազմութեան, որից միայն թշնամիններն էին օգտաւում: Հարկաւոր էր վերջապէս իրագործել հինգ կազմակերպութիւնների միութիւնը, կամ, եթէ այդ անկարելի էր, գոնէ գործունեութեան տակահայ մի համբաշխութիւն, մինչև էվոլիցիայի մի նոր էտապի վերայ իրականանար ամբողջական էնտէգրացիայի (ամբողջացում):

Թէկ գրանսական սօսիալիստական ամենից աւելի հասուն մոբերը գտնուարանում են հաւատալ որ Պարիզում գումարուած կօնդրէսը անպատճառ կարող է վերջանալ ցանկալի Միութեան արդիւնքով և այդ մասն թոյլ են տակս փոքրիկ վերապահում, այնու ամենայիւր, ի նկատի ունենալով, մէկ կողմից, բեակցիայի յառաջնազարդութիւնը տապալելու այն ուշուրիկան, որի ստացումը կատարուած է այնքան թանկ

գներով, որի համար ֆրանսական բանւորական աշխարհը պարբերաբար արիւն է թափել և որ ամենայարմար հօղնէ, որի վերայ սա կարող է զարգանալ ւաղստօրէն, գիմելու համար իւր իդէալի մէջ կոռուելու հինգ կուսակցութիւնների մէջ գտնուած տարբերութիւնների և հակասութիւնների, եթէ ոչ բացարձակօրէն, գոնէ մէծ չափերով, մաշուած և գրեթէ անհետանալու վերայ եղած լինելը էվոլիցիայի ընթացքում, կարելի է համարձակ ասել որ կօնդրէսը կտայ որպէս վերջնական արդիւնք ֆրանսական սօսիալիստական հինգ կուսակցութիւնների ամբողջական Միութիւնը: Զգետք է կարծել որ ներկայ կօնդրէսը բուսաւ յանկարծ սունկի նմիւն եւ ամենեւին չէր սպասուած: Կողմից առաջ այդ բարբերութիւնը ամենի գոյութեան հիմքն է կազմում այլ ևս: Առարկում են յեղափոխական և ռէֆորմիստ տերմբի գոյութիւնը, որոնցով զատուամ են հինգ կուսակցութիւնները, սակայն այդ տարբերութիւնը բացարձակ չէ: Ժօրէս ասւամ է համարձակ որ ինքը չէ ճանաչում ոչ մի ֆրանսացի սօսիալիստ՝ որ բացառապէս լինելը յեղափոխական կամ ռէֆորմիստ: Առարկում են կարակտերների անվերածելիութիւնը. բայց կարակտերները սեն և չին կարող ստեղծել հասարակական հաստատութիւնները. սրանը ստեղծւում են, ծնուամ են անհրաժեշտութիւններից, որոնց ենթարկում են, հպատակւում են, յարմարուում են կորակտերները: Այն կարակտերները, որոնք անընդունեակ են հանգիսանում յարմարուելու, վերջ ի վերջոյ խորտակւում, ոչնչանում են, տեղտալով այն կարակտերներին՝ որոնք անհրաժեշտ պահանջ են հանգիսանում ծագող անհրաժեշտութեան իրագործման որ միակը վճռում է ամեն բան: Արակտերները գործիքներ են միայն, որոնք կանչւում են ան հրաժեշտ շտութեան ծառայութեան: Այս մասում է, նրանը անցնում են:

Ամեն բան, ուրեմն, թոյլ է տակս ենթադրելու որ գրանսական սուջին ազգային կօնդրէսի երկունքից ուրիշ բան չի ծնի բայց եթէ գրանսական սօսիալիստական Միութիւնը, որ կդայ զօրացնել եւրոպական ընդհանուր սօսիալիզմը, սպասելով որ մի այլ մօմենտի վերայ կատարուի ընդհանուր Միջազգային Սօսիալիստական Միութիւնը: Բայց այդ մօմենտը Սօսիալիստական Իդէայի Յաղթանակը կլինի արդէն:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Lambert. — 85, Peckham Rye

London S. E. [Angleterre]